

# ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾ

## ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՊՏՀ «Ֆինանսական շուկաներ» և  
ինստիտուտներ» ամրիտնի ասպիրանտ

### ԱՌԵՎԱՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵԹ-ՂԹԵՐԻ ԾՈՒԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՍԱՄՆԱԿԻՑՆԵՐ

Առևտրային բանկը առաջին հերթին ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ է, որը ֆինանսական շուկայում շահույթ է հետապնդում տնտեսավարող սուբյեկտներին ֆինանսական ծառայությունների որոշակի հավաքածու մատուցելու միջոցով, որոնց հիմքում ընկած են բանկային յուրահատուկ ծառայություններ:

Ֆինանսական կառուցվածքի մասշտարային հետազոտության հիման վրա Դեմիրգուչ-Կանտը և Լևինը արել են հետևյալ եզրակացությունը<sup>1</sup>. որքան հարուստ է երկիրը, այնքան, ընդհանուր առճանք, ավելի զարգացած է և առավել ակտիվ ու արդյունավետ է գործում դրա ֆինանսական համակարգը, այնքան ավելի ակտիվ և արդյունավետ է ֆոնդային շուկան՝ բանկերի համեմատությամբ: Այլ խոսքով՝ ազգային ֆինանսական համակարգը սկսում է ավելի կողմնորոշվել դեպի կապիտալի շուկան:

Ֆինանսական համակարգի տեսակը պայմանավորված է այն հաճախանաբով, թե ֆոնդային շուկայի ինչ մոդել է ձևավորվում այս կամ այն երկրում: Յա. Միրկինը նշում է, որ զարգացած երկրների շուկայական տնտեսությունը ցուցադրում է տարրեր մոդելներ<sup>2</sup>: «անզիր-սարսնական» (բողոքական կապիտալիզմ) և գերմանական տեսակի «հոենույան» կապիտալիզմ, ճապոնական կամ շվեդական և այլն:

Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում տեղի է ունենում բննարկված մոդելների տարրերությունների վերացում, և ավելի էական են դառնում ֆինանսական շուկաների կազմակերպման նմանությունը կամ նույնիսկ համընկնումը: Մյուս կողմից՝ առաջանում է ֆինանսական հոլինգների ձևավորման միտում: Արժեքրերի շուկայում բանկերի գործունեությունն ընդլայնվում է, բազմազանեցվում է սեփականության կառուցվածքը: Եվրոպական երկրներում ֆինանսական միջնորդության ցանցը մեծանում է, ոչ բանկային ֆինանսական միջնորդները ավելի ու ավելի կարևոր դեր են խաղում որպես ոչ ֆինանսական հատվածներից կապի-

<sup>1</sup> Տե՛ս Demirguc-Kunt Asli, Levine Ross, Bank-based and Market-Based Financial Systems: Cross-Cultural Comparisons:

<sup>2</sup> Տե՛ս Миркин Я., Рынок ценных бумаг России: Воздействие фундаментальных факторов, прогнозов и политика развития. М., „Альпина Паблишер”, 2002, էջ 624:

տալի հավաքագրողներ<sup>3</sup>:

Ինչ վերաբերում է հայկական շուկային, ապա այն միանգամից ձևավորվել է առավել ժամանակակից գաղափարախոսության հիման վրա, այդ պատճառով իր վրա չի կրում հին, անցած սովորությունների և տեխնոլոգիաների բեռը, ինչը պետք է նպաստի տեղի ունեցող ինստիտուցիոննալ փոփոխություններին ավելի հեշտ հարմարվելուն:

Վերջին տարիներին քանիկերի քանակի զգալի փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչը չի կարելի ասել վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների կամ ապահովագրական ընկերությունների մասին.

#### **Աղյուսակ 1 ՀՀ ֆինանսական շուկայի իհմնական մասնակիցների թիվը 2001-2011 թթ.<sup>4</sup>**

	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
<b>Առևտրային քանիկեր</b>	30	28	20	20	21	21	22	22	22	21	21
<b>Վարկային կազմակերպություններ</b>	5	6	6	9	10	17	21	24	27	32	31
<b>Ներդրումային ընկերություններ</b>	20	20	21	19	18	20	13	10	8	8	8
<b>Ապահովագրական ընկերություններ</b>	25	23	22	26	23	15	10	12	12	11	9

Աղյուսակի տվյալները վկայում են ՀՀ-ում առևտրային քանիկերի՝ ֆինանսական շուկայի մյուս մասնակիցների համեմատությամբ առավել կայունության մասին, ինչպես նաև փաստում են, որ քանիկերի ակտիվները ավելի մեծ են ֆինանսական շուկայի մյուս մասնակիցների ակտիվներից:

Ապահովագրական և ներդրումային ընկերությունների քանակի նվազումը վկայում է այդ ինստիտուտների թերզարգացման, իսկ վարկային կազմակերպությունների քանակի աճը՝ զարգացման մասին:

#### **Աղյուսակ 2 ՀՀ արժեքրեկի շուկայի ինստիտուցիոննալ մասնակիցների կազմում առևտրային քանիկերի տեսակարար կշիռ<sup>5</sup>**

	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
<b>Առևտրային քանիկեր</b>	0	0	0	0	0	0	1	13	20	19	19
<b>ԱԾ մասնակիցների կազմում առևտրային քանիկերի տեսակարար կշիռ</b>	-	-	-	-	-	-	7.7%	65.0%	74.1%	76.0%	76.0%
<b>Ընդամենը մասնակիցներ</b>	16	20	21	19	18	20	13	20	27	25	25

<sup>3</sup> Տե՛ս Schmidt Reinhard H., Hackethal Andreas, Tyrell Marcel, Disintermediation and the Role of Banks in Europe: An International Comparison, Johann Wolfgang Goethe – Universitat, Frankfurt am Main. Working Papers Series: Finance & Accounting. No 10, January 1998:

<sup>4</sup> Աղյուսակը կազմել ենք <http://www.cba.am>, <http://www.nasdaqomx.am>, <http://www.armstat.am> կայքի տվյալների հիման վրա:

<sup>5</sup> Աղյուսակը կազմել ենք <http://www.nasdaqomx.am> կայքի տվյալների հիման վրա:

Առևտրային բանկերը ՀՀ-ում սկսել են զարգանալ 2007 թ.-ից՝ «Արժեքափերի շուկայի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, և բանկերի ճնշող մեծամասնությունը հանդես է գալիս որպես արժեքափերի շուկայի ինստիտուցիոնալ մասնակից:

Առևտրային բանկերի կողմից արժեքափերի շուկայում գործառնությունների օպտիմալ կազմակերպման համար մեծ նշանակություն ունի դրանց դասակարգման ուսումնասիրությունը.

### Աղյուսակ 3

#### *Առևտրային բանկերի կողմից արժեքափերով գործառնությունների տեսակները դասակարգումը<sup>6</sup>*

Դասակարգման հատկանիշը	Արժեքափերով գործառնությունների տեսակները		
Հստ արժեքորի տեսակի	Բաժնետոմսերով Պարտատոմսերով Սուրհակներով Ածանցյալ արժեքորով		
Հստ գործառնությունների քառորդի	Ակտիվային (ներդրումային) Պատահային (էմիսիոն) Կոմիսիոն-միջնորդային Բրոքերային Խորհրդատվական Տրաստային (հավատարմագրային) Դեպոզիտային Տրանսֆեր-գործակալային Ինկասացիոն Երաշխիքային		
Հստ հաճախորդների	Իրավաբանական անձանց սպասարկում Ֆիզիկական անձանց սպասարկում	Ուղիղենտների սպասարկում Ոչ ուղիղենտների սպասարկում	Թողարկողների սպասարկում Ներդրողների սպասարկում Միջնորդների սպասարկում
Հստ բանկի գործունեության վերջնական արդյունքի ձևավորման մեջ մասնակցության բնույթի	Հիմնական գործառնություններ Օժանակ գործառնություններ՝ արժեքափերով վարկավորման արժեքափերի գրավադրման ոլուկերի ապահովագրության		
Հստ նախատակայնության	Ուղղված՝ եկամտի ստացմանը իրացվելության ապահովմանը ոլուկերի նվազեցմանը Ուղղված այլ նախատակների՝ ծեռնարկության նկատմամբ հսկողության ծեռքբերման, սպասարկման ժամանակ արտոնությունների ապահովման, մրցակցության սահմանափակման, միաձուլման և կլանման, այլ		

<sup>6</sup> Աղյուսակը կազմել ենք առևտրային բանկերի տվյալների ուսումնասիրության հիման վրա.  
<http://www.worldbank.org>, <http://www.cbrd.com>, <http://www.imf.org>, <http://www.banks.am>,  
<http://www.bis.org/cbanks.htm>.

Ըստ իրականացման միջոցի	Միջնորդի միջոցով իրականացվող թանկի կողմից ինքնուրույն իրականացվող՝ բորսայի միջոցով բորսայից դուրս
Ըստ իրականացման ժամկետի	Դրամարկղային Ժամկետային
Ըստ արժեքի արժույթի	Ազգային արժույթով Արտարժույթով
Ըստ արժեքի պատկանելության	Հայրենական Արտասահմանյան

Այսպիսով՝ արժեքի շուկայում առևտրային բանկերը իրականացնում են չորս տնտեսական գործառույթներ՝ ներդրողի, միջնորդի, հաշվարկային կենտրոնի և բողարկողի, ըստ այդմ՝ հսկում են ներդրումային հոսքերի հիմնական մասը:

Կարծում ենք՝ արժեքի շուկայում բանկի գործունեությունը չպետք է դիտվի նրա այլ գործառնություններից կախված: Հենց բանկի՝ որպես ֆինանսավարկային միջնորդի առանձնահատկությունը պետք է դառնա այն սկզբնակետը, որը բույլ կտա պարզել արժեքի երրով գործառնությունների կազմակերպման նրա յուրահատկությունը:

ՀՀ-ում բանկերը ֆինանսական շուկայի ամենազարգացած մասնակիցներն են, որը պայմանավորված է ՀՀ-ի՝ դեռևս զարգացող պետություն լինելով, իսկ ֆինանսական շուկայի մյուս մասնակիցները իրենց զարգացման տեսնպերով դեռևս հետ են մնում առևտրային բանկերից:

Ներդրումային ռեսուրսների հիմնական սեփականատերերն են պետությունը, կազմակերպությունները և բնակչությունը: Ներդրողների նշված կատեգորիաների կողմից արժեքի բույնը միջոցների անմիջական ներդրումը տեղի է ունենում երկու եղանակով՝ ներդրումային միջնորդների միջոցով և սեփական ուժերով:

Արժեքի շուկայում բանկերն իրականացնում են տարարնույթ ֆինանսական գործառնություններ, որնք դասակարգվում են տարբեր բնութագրիներով: Որոշ տնտեսագետներ կարևորում են բանկերի գործառնությունների դասակարգումն ըստ իրականացման նպատակի՝<sup>7</sup> ուղղակի և պորտֆելային (փաթեթային) ներդրումներ:

Ուղղակի ներդրողները ցանկանում են մասնակցել ձեռնարկության կառավարմանը՝ ակնկալելով շահույթի ստացում շահարաժնի տեսքով: Նրանց անվանում են ռազմավարական ներդրողներ, և կատարած ներդրումները կրում են երկարաժամկետ բնույթ: Այսպիսի ներդրողները ՀՀ-ում սակավաթիվ են, որի հիմնական պատճառներն են՝

- երկրի հետ կապված ռիսկի առկայությունը,
- կլանների գոյությունը,
- արժեքի շուկայի թերզարգացումը,
- օրենսդրական դաշտի անկատարությունը,
- պետական ռազմավարական ծրագրի բացակայությունը,

<sup>7</sup> Структура деятельности коммерческого банка. М., 2004, № 413:

- ռազմավարական ներդրումների ծրագրի բացակայությունը<sup>8</sup>:

Պորտֆելային ներդրողները չեն ցանկանում մասնակցել ձեռնարկության կառավարմանը, սակայն ակնկալում են շահույթի ստացում շահարժամի ձևով: Այս ներդրողները ձևավորում են տարբեր ընկերությունների արժեքների փաթեթ և կառավարում այն: Այսպիսի ներդրողները ՀՀ-ում ներկայում գրեթե չկան: Դա պայմանավորված է նրանով, որ շահարաժինները հիմնականում չեն վճարվում, փոքր ներդրողների իրավունքների ու շահերի պաշտպանության մեխանիզմը բացակայում է:

Բանկի գլխավոր նպատակը շահույթի ստացումն է, հիմնական խնդիրներից մեկը՝ իրացվելիության ապահովումը: Այդ խնդիրի լուծման համար օգտագործվում են արժեքներով այնպիսի գործառնություններ, ինչպիսիք են մուրհակմերի հաշվառումը, լոմբարդային վարկը, ռեպո գործարքները և այլն: Իրացվելիության կառավարումը կարող է իրականացվել նաև ուղղակի արժեքների առք ու վաճառքի ճանապարհով:

Արժեքներով կատարվող գործառնությունները բույլ են տալիս առևտրային բանկերին մեղմելու հիմնական բանկային գործառույթների իրականացման ժամանակ ծագող հակասությունները: Ավանդաբար բանկերը առավել ակտիվ գործառնություններ են իրականացնում մուրհակմերով և սերտիֆիկատներով, որոնց բնույթը վարկային է:

Արժեքներով կատարվող գործառնությունները բանկը կարող է իրականացնել ինչպես իր հաշվին, այնպես էլ հաճախորդների հաշվին և նրանց հանձնարարությամբ: Եթե արժեքներով գործառնությունները կատարվում են բանկի հաշվին և ուղղված են բանկի ռեսուրսների ձևավորմանը, ապա դրանք պահպանին են:

Բանկի կողմից արժեքներով իրականացվող գործառնությունները, կապված սեփական միջոցների տեղաբաշխման հետ, որոնք կատարվում են բանկի անունից և բանկի հաշվին, կոչվում են ակտիվային: Դրանք ներառում են արժեքներում ներդրումները, մուրհակմերի հաշվառումը, արժեքների գրավադրմամբ վարկավորումը և արժեքներով վարկավորումը:

ՀՀ-ում արժեքներով իրականացվող գործառնությունների ընդհանուր ծավալում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն բանկերի կողմից արժեքներով կատարվող գործառնությունները, բանի որ մեզանում դեռևս առկա է վախճ ու ռիսկից խուսափելու ազգային մտածելակերպը, իսկ նման ռիսկերի դիմելիս առավել ապահովված են առևտրային բանկերը:

Բանկերի կողմից արժեքներով իրականացվող դասական գործառնությունները, բանկերի նպատակներից ելնելով, կարծում ենք, կարելի է միավորել հետևյալ խմբերում:

1. իրացվելիության պահուստների պահպանման նպատակով կատարվող գործառնություններ,
2. համեմատաբար երկար ժամկետում եկամտի ստացման նպատակով իրականացվող գործառնություններ,
3. տնտեսավարող սուրյեկտների վարկավորմանը նման գործառնություններ,

<sup>8</sup> Տե՛ս Проблемы развития рынка капитала в Армении: Сборник материалов научно-практической конференции 14.04.1999, Еր.:

4. սեփական արժեքոթերի բողարկման միջոցով ռեսուրսների ներգրավման գործառնություններ,

5. գործառնություններ, որոնց միջոցով բանկը բավարարում է հաճախորդների պահանջները՝ հանդես գալով որպես նրանց գործակալ:

Դրամի պահանջարկի տատանման մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր պատճառ կապված է բանկերի կողմից իրականացվող վարկավորման գործառույթի հետ:

Իրացվելի կության բարձր մակարդակի ապահովման ամենապարզ եղանակը դրամարկղում և թղթակցային հաշիվներում հաստատում չնվազող մնացորդ ունենալն է, որը հնարավորություն կտա ծածկելու բանկից արտահոսող դրամական միջոցների ծայրահեղ տատանումները: Այս եղանակը, լինելով ամենապարզը, միաժամանակ ամենաբանկն է, քանի որ, ըստ էության, սառեցվում են միջոցներ, որոնք կարող են բանկին եկամուտ բերել:

Իրավիճակից ելքը միջոցների եկամտաքեր տեղաբաշխման այնպիսի ուղիների որոնումն է, որոնք, ի տարրերություն վարկերի, հնարավոր կիննի արագ վերածել դրամական միջոցների՝ դրանց հանդեպ մեծ պահանջարկի դեպքում:

Զարգացած ֆինանսական համակարգ ունեցող երկրներում նման հնարավորություններ բանկերին ընձեռում է արժեթղթերի շուկան: Այդ շուկայում գտնվող գործիքները բանկերի համար կարող են իրացվելի կության պահուստ ձևավորել: Դա անվանում են իրացվելի կության երկրորդային ռեզերվ, ի տարրերություն առաջնայինի, որը ներառում է դրամարկղում և թղթակցային հաշիվներում կանխիկ փողը:

Նման ռեզերվի համար պիտանի արժեթղթերը պետք է օժտված լինեն մի շարք հատկություններով.

1. ակտիվներն շրջանառվեն շուկայում և արագ իրացվեն,

2. դրանց գների տատանումները պետք է նվազագույն չափով լինեն, որպեսզի հնարավոր լինի ցանկացած պահի վաճառել՝ առանց կորուստների,

3. դրանք բողարկողին չվճարման ռիսկն այնքան անհշան լինի, որ դա անտեսվի:

Արժեթղթերի առատության մեջ նշված պահանջներն առավել ընդգրկուն բավարարում են պետական պարտքային արժեթղթերը: Ոչ մեծ ծավալներով պահուստում կարող են ընդգրկվել նաև շուկայում շրջանառվող խոշոր բանկերի դեպոզիտային սերտիֆիկատները, ինչպես նաև ապահով կորպորացիաների կարճաժամկետ պարտքային պարտավորությունները:

Հայաստանում բանկերի կողմից մեծ ծավալի գործարքներ առավելապես կատարվում են պետական արժեթղթերով, որոնց տեսակարար կշիռը պետական պարտատոնսերով իրականացվող ընդհանուր գործառությունների մեջ 2009 թ. կազմել է 41.1%<sup>9</sup>:

<sup>9</sup>Տե՛ս ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝ <http://www.cba.am>

**Այլուսակ 4**

**ՀՀ առևտրային բանկերի կողմից պետական արժեքրդերով գործառնությունների ծավալը դրանցով իրականացվող ընդհանուր գործառնությունների մեջ**

	2006	2007	2008	2009	2010	2011 հոկտեմբեր
<b>Պետական արժեքրդերով իրականացվող գործառնությունների ծավալը</b>	93623	112190	81107	109341	135523	139677
<b>Տեսակարար կշիռը բանկերի կողմից արժեքրդերով իրականացվող ընդհանուր գործառնությունների ծավալում աստիճանաբար նվազել է: Տվյալները վկայում են, որ ՀՀ առևտրային բանկերի համար գրավիչ են պետական արժեքրդերը:</b>	98.7%	97.6%	96.0%	96.3%	97.1%	97.0%

Այլուսակի տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ առևտրային բանկերի կողմից պետական արժեքրդերով գործառնությունների տեսակարար կշիռը դրանցով իրականացվող ընդհանուր գործառնությունների ծավալում աստիճանաբար նվազել է: Տվյալները վկայում են, որ ՀՀ առևտրային բանկերի համար գրավիչ են պետական արժեքրդերը:

Իրացվելիության երկրորդային ռեզերվի գործառույթը բանկի օպերատիվ իրացվելիության ապահովումն է, իսկ բանկից դրամական միջոցների ելքերը էականորեն գերազանցում են մուտքերը, այն դեպքում, երբ անհրաժեշտ է օպերատիվորեն բավարարել հաճախորդների փարկային պահանջները:

Ներդրումային արժեքրդերը բանկերին տոկոսային եկամուտ են բերում, ներդրումային ծառայությունների մատուցման դիմաց եկամուտ են ստանում կոմիսիոն վճարների և շուկայական արժեքի աճի ձևով: Ներդրումային արժեքրդերն ավելի մեծ եկամուտ են ապահովում, քան իրացվելիության ռեզերվում ներառվողները, բայց շատ ավելի ցածր եկամուտ, քան փարկային գործառնությունները:

Ներդրումային փաթեթի նկատմամբ նվազագույն պահանջն այն է, որ փոխհատուցի ներգրաված դեպոզիտների դիմաց ծախսերը՝ ապահովելով ոչ մեծ տոկոսային կետին մոտ մարժա: Ի տարբերություն վարկերի, ներդրումային արժեքրդերը համեմատաբար երաշխավորված կայուն եկամուտ են ապահովում՝ ստեղծելով եկամուտների յուրահատուկ «քարձիկ», որը ներդրումային արժեքրդի կարևորագույն առավելություններից է:

Այլուսակի 5-ի տվյալներից երևում է, որ ֆոնդային բորսայում բանկերը ներդրումային արժեքրդերով ամենամեծ ծավալով գործարքներ կատարել են 2009 թ., իսկ առևտրային բանկերի կողմից բորսայում ներդրումային արժեքրդերով իրականացվող գործառնությունների տեսակարար կշիռը բանկերի կողմից արժեքրդերով կատարվող ընդհանուր գործառնությունների մեջ հիմնականում նվազել է:

## Աղյուսակ 5

**ՀՀ առևտրային բանկերի կողմից ներդրումային արժեքորերով ֆոնդային բորսայում կատարվող գործառնությունների ծավալը արժեքորերով իրականացվող ընդհանուր գործառնությունների մեջ<sup>10</sup>**

մլն դրամ

	2006	2007	2008	2009	2010	2011 օգոստոս
<b>Ներդրումային արժեքորերով իրականացվող գործառնությունների ծավալը</b>	2241.7	1812.4	329.7	3698.0	525.6	387.5
<b>Տեսակարար կշիռը բանկերի կողմից արժեքորերով իրականացվող ընդհանուր գործառնությունների մեջ</b>	2.4%	1.6%	0.4%	3.3%	0.4%	0.3%

Առևտրային բանկերի կողմից մուրհակներով իրականացվող հիմնական գործարքների շարքում կարելի է առանձնացնել սեփական մուրհակների բողարկումը՝ մուրհակային վարկերի հատկացումը, մուրհակներով կոմիսիոն գործառնությունները և դրանց գրավադրմամբ շուկայի մյուս մասնակիցների վարկավորումը:

Բանկային վարկավորման գործառնություններից է արժեքորերի առուվաճառը՝ հետադարձ զննան պայմանով, կամ կարծ՝ ռեպո գործառնությունները, որոնք, որպես կանոն, օգտագործվում են կարճաժամկետ վարկավորման համար:

Տնտեսական բնույթով ռեպո գործարքները նման են արժեքորերի գրավադրմամբ վարկավորմանը, սակայն վերջինս չի նախատեսում սեփականության իրավունքի փոխանցում:

Բանկերը ռեպո գործարքներն օգտագործում են իրացվելիության կառավարման, սնանկացման ռիսկի նվազեցման, բանկային գործունեության ֆինանսավորման և ամբողջ բանկային համակարգի ապահովության մակարդակի բարձրացման նպատակով:

Առևտրային բանկերը ֆոնդային բորսայում ռեպո գործառնություններ սկսել են իրականացնել 2009 թ., և առաջիններից են եղել «Արարատբանկը» և «Կոնվերսանկը»: Մինչ այդ, բանկերի կողմից ռեպո գործարքներ կնքվել են արտաքրոսայում:

Աղյուսակի 6-ի տվյալներից երևում է, որ ռեպո գործառնությունները լայնորեն տարածված են ՀՀ առևտրային բանկերում, սակայն, 2009 թ. սկսած, դրանց ծավալը արժեքորերով իրականացվող ընդհանուր գործառնությունների մեջ նվազել է, ինչի հիմնական պատճառը, կարծում ենք, ճգնաժամն է:

«Արժեքորերի շուկայի մասին» ՀՀ օրենքով բանկերը կարող են բանկային լիցենզիայի հիման վրա մատուցել հիմնական և ոչ հիմնական ներդրումային ծառայություններ:

<sup>10</sup> Տե՛ս NASDAQ OMX Armenia պաշտոնական կայք՝ <http://www.nasdaqomx.am>

## Աղյուսակ 6

**ՀՀ առևտրային բանկերի կողմից իրականացվող ռեպ գործառնությունների  
ծավալը արժեքորդերով իրականացվող ընդհանուր գործառնությունների մեջ<sup>11</sup>**

մլն դրամ  
2011  
օգոստոս

	2006	2007	2008	2009	2010	
<b>Ռեպ գործառնությունների ծավալը</b>	12351.6	19858.8	18853.4	20980.3	21452.8	13524.0
<b>Տեսակարար կշռը բանկերի կողմից արժեքորդերով իրականացվող ընդհանուր գործառնությունների մեջ</b>	13.0	17.3	22.3	18.5	15.4	9.4

Բանկերը կարևոր դեր են խաղում արժեքորդերի միջազգային շրջանառության կազմակերպման գործում՝ դեպոզիտային անդրրագրերի թողարկմամբ: Դեպոզիտային անդրրագրերը ֆինանսական ինստիտուտներին, որոնց արգելված են արտասահմանյան արժեքորդերում ներդրումները, թույլ են տալիս մի կողմից՝ ներդնել միջոցներն այդպիսի արժեքորդում, մյուս կողմից՝ արժեքորդեր բողարկողներին հնարավորություն են տալիս դրանք իրացնելու միջազգային շուկաներում<sup>12</sup>:

Ամփոփելով ասվածը՝ բանկերի կողմից արժեքորդերով իրականացվող գործառնությունները կարելի է դասակարգել 4 խմբում՝ ելնելով դրանց նպատակայնությունից: Ներդրումային գործառնություններ, հեջափորման գործառնություններ, իրացվելիության կառավարման հետ կապված գործառնություններ, հաճախորդներին մատուցվող ծառայություններով պայմանավորված գործառնություններ:

Ներդրումային գործառնությունների առարկան հիմնականում բաժնետոմսերն ու պարտատոմսերն են: Բանկերը հեջափորման գործառնություններ իրականացնելիս նպատակ ունեն նվազեցնելու ռիսկերը և հնարավորինս կառավարելու դրանք, քանի որ արժեքորդերով կատարվող գործառնությունները բավական ռիսկային են: Այսպիսով՝ արժեքորդերի շուկայում կարևորվում են առևտրային բանկերի ինչպես ներդրումային գործառնությունները, այնպես էլ ներդրումային ծառայությունները, քանի որ գործարքների մեծ մասը իրականացվում է բանկերի միջոցով:

### ТИГРАН ХАЧАТРЯН

*Аспирант кафедры „Финансовые  
рынки и институты“ АГЭУ*

**Коммерческие банки как институциональные участники рынка ценных бумаг.-** Коммерческий банк в первую очередь является субъектом хозяйственной деятельности, который на финансовом рынке приследует прибыль посредством оказания хозяйственным субъектам определенного

<sup>11</sup> Տես ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝ <http://www.cba.am>

<sup>12</sup> Տես „Коммерсант“, 1996, N12, էջ 46:

набора финансовых услуг, в основе которых лежат банковские специфические услуги.

Главной целью банка является получение прибыли, а одним из основных задач - обеспечение ликвидности. Для решения этих задач банки осуществляют разные операции с ценными бумагами.

На рынке ценных бумаг коммерческие банки осуществляют четыре экономические функции - инвестора, посредника, расчетного центра и эмитента, и поэтому контролируют основную часть инвестиционных потоков.

**TIGRAN KHACHATRYAN**

*Post-graduate at the Chair of „Financial Markets and Institutions” at ASUE*

**Commercial banks as institutional securities market participants.-** The commercial bank first of all is a subject of economic activities which pursues profit in the financial market by providing a certain set of financial services to economic subjects on the basis of which special bank services are laid.

The main purpose of the bank is making profit, and one of the primary goals is the liquidity support. For the solution of these problems the banks realize different operations with securities.

In the securities market commercial banks perform four economic functions - those of the investor, the intermediary, the financial settlements centre and the emitter, and consequently supervise the basic part of investment streams.